

ԼՈՒԾՈՒՄԻ ՅՈՅՍԵՐ

Միացեալ Նահանգներու նախագահ Տոնըտ Թրամփ կարծիք յայտնեց, որ ռուս-ուկրաինական պատերազմը կը մօտենայ իր աւարտին: Խօսելով Իրանի թղթածրարին մասին, նախագահը շեշտեց, որ կը նախընտրէ խաղաղ լուծումը եւ Թեհրանի հետ համաձայնութեան կնքումը:

ԱՌՆ. «ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՎԵՐՋԻՆ ԸՆՏՐԱՆՔՆ ԷՐ»

Հանրապետութեան նախագահ ժողգէ Աուն յայտնեց, որ Իսրայէլի հետ բանակցիլը Լիբանանին առջեւ մնացած վերջին ընտրանքն էր: «Լիբանանի համար ամերիկեան աշխատանքային խումբ»-ին հետ ունեցած հեռավար ժողովին ընթացքին, Աուն շեշտեց Իսրայէլին վրայ ճնշում գործադրելու անհրաժեշտութիւնը, որպէսզի հեռանայ լիբանանեան բռնագրաւեալ շրջաններէն եւ ազատ արձակէ գերիները, որպէսզի լիբանանեան բանակը տեղակայուի այդ

ՀԱՐԱՄԱՅԻՆ ՀԱՐՈՒՄՇԵՐ

Լիբանանեան բանակը շարունակեց իր գործողութիւնները հարաւային շրջաններու մէջ եւ վնասագերծեց Նապաթի եւ Պընթ ժայլ շրջաններուն վրայ ինկած, սակայն չպայթած շարք մը հրթիռներ եւ ծանր ռումբեր: Իսկ իսրայէլեան բանակի սպայակոյտի պետը այցելեց լիբանանեան բռնագրաւեալ շրջաններ, ուրկէ պահանջեց, որ լիբանանեան բանակը գործադրէ շրջանակային պատմական համաձայնագիրը եւ հարաւային շրջաններէն հեռացնէ Հրճպալայի ռմբերը:



շրջաններուն մէջ եւ հաստատուի արդար ու մնայուն խաղաղութիւն: «Սիրահարուած չեմ Իսրայէլին, սակայն շրջանակային համաձայնութիւնը մերժողներուն կ'ըսեմ, թէ կը սպասեմ իրենց առաջարկներով այլընտրանքները կամ Նոր լուծում մը, որ մեզ դուրս կը բերէ պատերազմներէն», շեշտեց Աուն:

Նախարարները վարչապետ Նաուֆ Սալամի գլխաւորութեամբ գումարեցին խորհրդակցական ժողով մը, որուն ընթացքին ընկերակցեցին հարաւեւ տեղահանուած քաղաքացիներուն տունդարձը եւ կործանուած շրջաններուն վերակառուցումը: Տեղեկատուութեան նախարար Փօլ Մարքոս ժողովէն ետք յայտնեց, որ պատերազմին ուղղակի վնասները կը հասնին առնուազն չորս միլիարտ տոլարի:



Գետնի վրայ, իսրայէլեան ռմբերը յաւելեալ պայթումներ կատարեցին հարաւի բռնագրաւեալ գիւղերուն մէջ եւ անօդաչու սարքերով թիրախաւորեցին շարք մը շրջաններ՝ մանաւանդ Նապաթի գաւառին մէջ: Ազգային լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Նոյն շրջանին մէջ ինքնաշարժի մը թիրախաւորումին հետեւանքով մահացած է չորս մարդ:

Առողջապահութեան նախարարութիւնը յայտարարեց, թէ 2 Մարտին սկսած իսրայէլեան յարձակումներուն հետեւանքով մինչեւ երէկ երեկոյեան Լիբանանի մէջ մահացած է 4319 մարդ, վիրաւորուած՝ 12.203 հոգի: Առողջապահական եւ փրկարարական ուղորտի աշխատակիցներուն շարքերէն մահացած է 135 հոգի, վնասուած է 17 հիւանդանոց, որոնցմէ երեքը սկամայ դարձեցուցած են իրենց աշխատանքը:

ՄԱՔՐՈՆ ՍՈՒՐԻԱ ԴԻՏԻ ԱՅՅԵԼԷ

Սուրիոյ նախագահութիւնը յայտարարեց, թէ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն մօտիկ ապագային պիտի այցելէ Դամասկոս, ուր իր պաշտօնակից Ահմատ Շարաային հետ պիտի քննարկէ երկկողմանի յարաբերութիւնները խորացնելու միջոցներն ու տարածաշրջանային զարգացումները: Շարաա-Մաքրոն խորհրդակցութիւններուն



ընթացքին կեդրոնացում պիտի ըլլայ Նաեւ երկկողմանի տնտեսական համագործակցութիւնը զարգացնելու միջոցներուն վրայ:

ԼԻԲԱՆԱՆ ՆԵՐԿԱՅ Է 2026-Ի ՄՈՆՏԻԱԼԻՆ

Թէեւ Լիբանանի ֆուլթայիլի հաւաքականը անգամ մը եւս չկրցաւ մասնակցիլ Աշխարհի ախոյեանութեան, այսուհանդերձ, Լիբանանի դրօշը չբացակայեցաւ Միացեալ Նահանգներու, Մեքսիքայի եւ Գանատայի մարզադաշտերէն: Մրցումներուն ընթացքին մայրիկներու երկրին դրօշը դաշտ տարած էին ոչ միայն սովորական լիբանանցիներ, այլ նոյնիսկ ֆուլթայիլը



տնօրինող ֆետերասիոնին՝ FIFA-ի նախագահ Ժիանի Ինֆանտինոն: «Որպէս Լիբանանի քաղաքացի մը, հրաշալի էր մեր գեղեցիկ դրօշը բարձրացնել այս ֆուլթայիլային գերազոյն պատուանդանէն», ըսաւ Ինֆանտինո, որ ամուսնացած է լիբանանցիի հետ եւ վերջերս ստացաւ Լիբանանի քաղաքացիութիւն:

ՄՈՍԿՈՒԱՅԻ ՀԵՏ ՍԵՐՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան Երթաթերիւն-պորկի մէջ տեսակցեցաւ իր ռուս պաշտօնակից Միխայիլ Միշուսթինի հետ, ընկերակցեց երկկողմանի խնդրայարոյց նիւթերը եւ լուծումի հնարաւոր ուղիները, ապա յայտնեց, որ Երեւան շահագրգռուած է Մոսկուայի հետ յարաբերութիւններու յաւելեալ զարգացումով: Փաշինեան շեշտեց Նաեւ, որ Հայաստան մտադիր է շարունակելու իր մասնակցութիւնը



Երասիական տնտեսական միութեան գործունէութեան: Միշուսթին իր կարգին մարդեց, որ Հայաստանի մէջ ձեւաւորուելիք Նոր կառավարութիւնը կ'ապահովէ երկկողմանի յարաբերութիւններուն հետեւողական զարգացումը՝ բարեկամութեան, բարիդրացիութեան եւ փոխադարձ յարգանքի հիման վրայ, միշտ նկատի առնելով երկկողմանի շահերը: Նշեց, որ Փաշինեան Ռուսիոյ մէջ մասնակցեցաւ Ինտերնոմ միջազգային արդիւնաբերական ցուցահանդէսին, ուր շրջեցաւ տաղաւարներով եւ արտասանեց ուղերձ մը, որուն մէջ շեշտեց, թէ արհեստագիտութիւնը կոչուած է ոչ թէ փոխարինելու մարդը, այլ զայն փրկելու միապաղաղ աշխատանքէն: Նշեց, որ խորհրդարանական ընտրութիւններէն ետք Փաշինեանին առաջին արտասահմանեան ուղեւորութիւնն էր այս եւ ընդհանուր առմամբ իր 33-րդ Ռուսիա այցելութիւնը:

Իսկ Ազգային ժողովի նախագահի թեկնածու Ռուբէն Ռուբինեան ընդունեց Հարաւային Կովկասի հարցով Եւրո-միութեան յատուկ ներկայացուցիչ Մակտալենա Կրոնօն: Ժողովակալները քննարկեցին տարածաշրջանային անվտանգութեան եւ կայունութեան վերաբերող շարք մը հարցեր: Անդրադարձ եղաւ փոխադրութեան հնարաւորութիւններուն եւ Հայ-ատրպայեճանական խաղաղութեան հոլովոյթին:

ԱԹՈՒՆԵՐԸ ԶՅՐԱԺԱՐԵԼՈՒ ՈՐՈՇՈՄ

Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններուն վերջնական արդիւնքը հաստատող Սահմանադրական դատարանի որոշումէն ետք, խորհրդարան մուտք գործելու հնարաւորութիւն ստացած ուժերէն ընդդիմադիր «Հայաստան» դաշինքը հրապարակեց յայտարարութիւն մը, որուն

մէջ քննադատեց դատարանին որոշումը, ապա յայտարարեց իր շահած աթոռները ստանձնելու մասին որոշումը: «Այս գէնը է եւ աթոռներէն կամաւոր հրաժարիլը կ'ըլլայ անպատասխանատուութիւն մեր պետութեան եւ մեր ընտրողներուն հանդէպ», յայտարարեց դաշինքը: «Խորհրդարանին մէջ մեր ներկայութիւնը կը համարենք որպէս քաղաքացիներու իրաւունքներու պաշտպանութիւն, անոնց խնդիրներուն մասին բարձրձայնելու եւ լուծումներ առաջարկելու գործիք», յայտարարեց նախկին նախագահ Ռոպերթ Զեչարեանի գլխաւորած դաշինքը, անցնելով որ աշխատանք պիտի տանի կանխելու Սահմանադրութեան փոփոխութիւնը, պաշտպանելու Եկեղեցին, ապահովելու քաղաքական բանտարկեալներուն եւ ռազմագերիներուն իրաւունքները եւ ի վերջոյ հեռացնելու իշխող վարչախումբը: Յիշեցնենք, որ խորհրդարանական ընտրութիւններուն յաջորդած օրերուն շատ կը խօսուէր աթոռներէն հրաժարելու հնարաւորութեան մասին, որպէս բողոքի նշան:

ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆԻ ԴԵՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Հայաստանի ԸՆՆչական կոմիտէի աշխատակիցները երէկ անելի քան 7 ժամ խուզարկեցին «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ղեկավար Գագիկ Ծառուկեանի բնակարանը եւ անոր պատկանող քանի մը տասնեակ ընկերութիւններու գրասենեակներն ու անոնց տնօրէններուն բնակարանները: Կոմիտէն յայտարարեց, թէ տասնեակ անելի քրեական գործերու ծիրին մէջ խուզարկումներ կատարած են միաժամանակ շուրջ 70 հասցէներու մէջ:

ՓԱՔԻՍԱՆԻ ՄԵՋ ԱՈՒԱԾԻՆ ԴԵՍՊԱՆ

Հայաստանը Փաքիստանի մայրաքաղաքին մէջ առաջին անգամ ըլլալով պիտի ունենայ դեսպան մը: Նախագահ Վահագն Խաչատուրեանի հրամանագրով, Կարէն Գրիգորեան նշանակուեցաւ Իսլամապատի մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան: Ան միաժամանակ կը վարէ Նաեւ Արաբական Միացեալ Եմիրութիւններու մէջ Հայաստանի դեսպանի պարտականութիւնը: Անոր նստավայրը Ապու Տապիլն է: Նշեց, որ Փաքիստան այն հազուագիտ երկիրներէն էր, որ դիւանագիտական յարաբերութիւններ չունէր Հայաստանի հետ, հայ-ատրպայեճանական հակամարտութեան լոյսին տակ: Սակայն, տարածաշրջանային մերձեցումին զուգահեռ, Երեւան եւ Իսլամապատ վերջապէս հաստատեցին դիւանագիտական յարաբերութիւններ:



ԶԱՅՆԵՐ ԳՈՒՆԵՆ

(արձագանգ թրքահայ կեանքի) - 1

Այսօր կ'ընդլայնենք մեր այս սիւնակին աշխարհագրական ծիրը ու առաջին անգամ ըլլալով գիրկ կը բանանք շա'տ կարեւոր հայօճախի մը՝ Պոլսոյ:

Պոլիսը իւրայատուկ տեղ մը կը գրաւէ սփիւռքեան քարտէսին վրայ, որովհետեւ ան, տասնամեակներ շարունակ, կեդրոնն էր արեւմտահայ գրական, կրթական, եկեղեցական, մամլոյ ու առհասարակ ազգային-քաղաքական կեանքին: Ու եթէ պիտի փափաքենք իմանալ, թէ վերջին 3-4 դարերուն ի՞նչ դեր ունեցաւ այս քաղաքը հայ կեանքի ու քաղաքակրթութեան ծնաւորման մէջ, պարտինք ամենէն առաջ դիմել Յ. Ճ. Սիրունիի քառահատոր կրթողային գործին՝ «Պոլիս եւ իր դերը»-ին (շարքը տպուած է Պէյրութ, 1965-1998):

Պոլիս փետրաթափ եղաւ անշուշտ 1915-ի չարաշուք արհաւիրքին պատճառով: Հայ գիրքն ու միտքը կորսնցուց իր ուժերուն շախշախիչ մեծամասնութիւնը: Ազգ. պատրիարքարանը, իր կարգին, թէ՛ կորսնցուց իր ընտիր հոգեւորականները (կարեւոր մաս մը՝ գաւառի մէջ ծառայող արմաշակաւներ), թէ՛ ալ Կիլիկիոյ ու Արեւմտահայաստանի իր բազմամարդ թեմերը...:

(Շարունակութիւնը տեսնել էջ 2)

Կայունության և Բարեբերության Ուղիով ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԵՏՔ Է ՎԵՐԱԳՏՆԵ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԵՒ ԱՐԴԱՐԱԲԱՇԽԱԿԱՆ ՇԻՆԻ՞՞ ԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ

ՊԱՐՈՅՐ Յ. ԱՐՊԱՇԵԱՆ

Արդեօք ո՞ւր մեկը կասկած ունէ՞ր, որ Հայաստանի խորհրդարանական ընտրությունները պիտի անցնին հանդարտաբար, կայուն ու կարգապահական մթնոլորտի մը մէջ, նկատի ունենալով որ, առ այդ, կացութիւնը երբեք լաւատեսութիւն չէր ներշնչեր, մասնաւոր՝ ի լուր այն խանգարիչ տարրերուն, որոնք իրենց ժխտական, կարծրամտ եւ անկարգապահ արարքներով ծանօթ էին եւ անպատկառօքէն կը վերաբերէին իրենց հակառակորդներուն ու մրցակիցներուն հետ:

Չենք կրնար հաւատալ ու հաստատել, որ ամէն ինչ հեզասահ ընթացաւ, առանց թոկոսի կամ մաքուր եւ արդար կարգավիճակներու իրականացումով:

Սակայն, արկունժութիւնն ու լարուածութիւնը, ջղաճգութիւնն ու դիրքագրումները գրեթէ բոլորին մօտ ակնյայտ էին, ի մասնաւորի ընդդիմադիրներու շարքին, որոնք, մէկ կողմէն՝ վրէժնորոշումներ ու հիւսիսներով լեցուած էին իշխանութեան դէմ, միւս կողմէն՝ դրոշմած ու հրահրուած էին իրենց շարժումները կազմակերպողներու կողմէ:



Այդուհանդերձ, ո՞վ կը կասկածեր, որ յետ ընտրութիւնը, երբ արդիւնները հետզհետէ յայտնի սկսեցին դառնալ, «պոթը կուտ»ները լսելի պիտի չդառնային, յատկապէս՝ այն անկիւններէն, ուր պարտութիւնը զգալի էր կամ զգեստուողը յայտնի, հետեւաբար, յարձակողականութիւնը պատրաստ էր դիմացիններուն ճգմելու, խօսքով թէ այլապէս:

Իշխանութիւնը, իր գանձանքներով, կարելիութիւններով ու միջոցներով, հրապարակները, գիւղերն ու քաղաքները ողողած էր իր քարոզչական մեքենաներով ու լծակներով, առանց վարանելու ու գոռալու, որ յաղթանակը իր «գրպան»ն է, շուտով գայն վայելելու եւ աւետիսը տալու ու բաշխելու համայն հայրութեան եւ աշխարհին:

Ընդդիմութիւնը եւս իր վարչամեքենաները լարած էր եւ ամբողջ իր համակարգով, երթերով ու խճանկարային մասնակցութիւններով կ'ուզէր իր գոյութիւնը բացայայտել ու ցուցադրել, փորձելով ինքզինքը համոզել, թէ ինքն է մրցանակակիրը եւ իշխանութեան փոփոխութեան մնացած են ծամեր, ներքնապէս, սակայն, ապրելով մտահոգութիւնը, կորսնցնելու ամէն ինչ որ իր երազն է ու հետապնդած ճակատագիրը:

Այնքանով որ կարելի էր հետեւի ընտրապայքարին, ելոյթները, հարցազրոյցները, կոչերը, յայտարարութիւնները ոչինչով բարենշալիս էին, քաղաքավարական ու ժողովրդավարական առումներով, քանի անոնց մեծ մասը կը փայլէր փոխադարձ վիրաւորանքներով, անուանումներով, կոպտութիւններով, իսկ պոռնությունները, աղմկարարութիւնները, անպատշաճութիւններն ու անգապաւնութիւնները հասցնելով իրենց անբաղձալիութեանց գագաթնակետին, խտուր համեմատուելով քաղաքակրթաւ, հաղորդական ու տպաւորիչ երեսներուն, ի դէմս այլ պետութիւններու մէջ կատարուած «նախանձելի» երէտյաններուն հետ:

Ի տարբերութիւն ժողովրդային այս վանողական տեսարաններուն ու բղաւոններուն, լրագրողներուն գրոյցները, անցորդներուն ու քաղաքացիներուն հետ, շատ անելի լուրջ ու կիրթ էին, անկեղծ եւ ազնիւ, համոզիչ ու պերճախօս արտայայտելով իրենց թեր ու դէմ այն միտքերը, գաղափարները կամ տեսակետները, որոնք հիմնուած են իրենց տրամաբանութեան ու դատողութեան վրայ:

Ցուցանշային էին այն կտրուկ ու դիպուկ արտայայտությունները, որոնք բնակիչներուն մեծամասնութիւնը կ'առաջարկէր Լիկու Փաշինեանի վարչապետութիւնը, ըստ իրենց, նկատի ունենալով անոր կառուցողական, խաղաղապաշտական ու բարեկարգչական ծրագրերու իրականացումն ու դրսեւորումը:

Այս բոլորը ի՞նչ կը նշանակէն, կ'անկարկեն կամ կը հետապնդեն, բացի այն իրողութենէն, որ հայաստանցիները կամ հայաստանաբնակները, հակառակ իրենց կրած ցարժանուն ու գրկակներուն, վիշտներուն ու տառապանքներուն, կորուստներուն եւ անիրաւութիւններուն, իրենց ղեկավարութիւններուն ու ղեկավարութիւններուն, կը նախընտրեն մնալ դէպի ապագան նայող առաջադրութիւններուն ու հայեցողութիւններուն վրայ, առանց մոռնալու իրենց հարագատներուն ու հոգեզաւակներուն նահատակութիւնը, ոչ ալ զիջելու իրենց հողային ու տարածքային սեփականութիւններէն, բայց, միաժամանակ, գերադասելով եւ նախընտրելով իրենց հայրենիքին գերիշխանութեան եւ անկախութեան շինիչ տարբերակները:

Շարունակութիւնը տեսնել էջ 3

ՉԱՅՆԵՐ ԳՈՒՄԷՆ

(Շարունակուած էջ 1-էն)

Այնուամենայնիւ, հայկական Պոլիսը շարունակեց շնչել, նոյնիսկ՝ ստեղծագործել, վերածաղկիլ, բոլորուելով Վոսփորի երկու ափերուն վրայ ցանցնուած իր դարաւոր եկեղեցիներուն ու դպրոցներուն շուրջ: Այսօր եւս, Պոլիս, իր 45-ի չափ հայկական եկեղեցիներով (նկատի ունինք հայ երեք յարանուանութիւնները միասնաբար), 15 վարժարաններով, զոյգ հիւանդանոցներով (Ազգ. Ս. Փրկիչ եւ Հայ Կաթողիկէ Ս. Յակոբ), մամուլով, պատկերասփիւռի արբանեակային «Լոյս» կայանով, Սանուց միութիւններով կը ջանայ վառ պահել համայնքային ապրումներու շահը: Սակայն, պոլսահայ գաղութը ա՛յլ թրքախօս է լայն չափով...: Հայերէնը իր երբեմնի փառաւոր տեղը վերջին 30-40 տարիներուն հետզհետէ զիջած է տեղական լեզուին: Ու ա՛յդ է պատճառը, որ իսթանպուլահայ ժամանակակից գրականութիւնը,-- որ Չահրատի, Խրախունիի, Ռ. Հատտեճեանի, Չաւէն Պիպեռեանի, Մեծուրիի, Վարդ Շիկախերի, Արման Վարդանեանի ու այլոց ճիգերով բարձունքներ նուաճած էր 1960-2010 երկարող յիսնամեակին,-- այսօր ճԻԶԱՍ է:

Դժուարութեամբ կը նաւարկեն Պոլսոյ հայատառ օրաթերթերն ալ՝ «Ժամանակ»-ն ու «Մարմարա»-ն: Անոնք պարբերաբար ահագանգ կը հնչեցնեն՝ զգացնել տալով անխուսափելի ընկրկումի մը ոտնածայնը...: «Ժամանակ», սերունդէ-սերունդ՝ սեփականութիւնը հոգնուեան ընտանիքին, արդէն 118 տարեկան է (հիմնուած՝ 1908-ին): Վերջին տարիներուն ան յաջողած է իր շուրջ համախմբել Երեւան հաստատուած սփիւռքահայ երիտասարդ գրիչներ, որոնք այլազանութիւն մը շահեցուցած են իր ջրոս էջերուն: 1940-ին հիմնուած «Մարմարա»-ն, որ նուազ քան տարի մը առաջ կորսնցուց իր երկարամտայ ու վաստակաշատ խմբագրապետը՝ գրագետ Ռ. Հատտեճեանը, սակաւաթիւ ուժերով կը ջանայ առկայ զգալի արժանիքներ, որոնք, որ լուսաշող արեւի մը նման ամէն օր կ'երեւնէր Վոսփորի հորիզոնին վերեւ...: Կայ ողբացեալ Հրանդ Տիգրի «Ալուս» թրքալեզու շաբաթաթիւթն ալ, որ ունի հայերէն սահմանափակ էջեր: Սուրբ Փրկիչ հիւանդանոցի համանուն ամսագիրը, այնքա՛ն փնտռուած ու սիրելի, կը թուի սուսկ-փուսկ դադրած ըլլալ՝ 75 տարի պատնէշի վրայ անխափան մնալէ ետք...:

Ստորեւ, մեր անդրանիկ հասկաքաղը պոլսահայ լուրերէն:

ՊԵՏՐՈՒՄ ԲԵՐՈՒՄ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ «Նարեկեան» սրահին մէջ, 8 Յունիսին, երգչուհի Մարալ Այվազ տունած է համերգ մը, բաղկացած թէ՛ դասական ու թէ՛ արդի երգերէ: Ժողովրդական շատ սիրուած երգերու առընթեր՝ մեներգչուհին իր մեկնաբանութիւններու ցանկին վրայ ունեցած է նաեւ երգեր Կոմիտասէն, Աշուղ Շահինէն, Սայաթ-Նովայէն, Գուսան Աշոտէն, մինչեւ իսկ Փոլ Պաղատելեանէն ու Արա Տիկեճեանէն: Երգերուն գործիքաւորումը կատարած է Արի Հերիւլ: Համերգի աւարտին՝ գնահատանքի խօսքեր արտասանած է Սահակ պատրիարքը:

ՍԿԻՏԱՐԻ Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ, 14 Յունիսին, հայ համայնքի գաւակները ոգեւոր օր մը ապրած են՝ մասնակից դառնալով մէկ անելի նշանակալից ձեռնարկներու: Նախ կերակուորեալ պատարագ մատուցուած է Յարութիւն քնյ. Տամատեանի կողմէ: Զարոզած է Սահակ պատրիարք, յատկապէս անդրադառնալով Ս. Խաչ դպրեմանքի հիմնադիր Գարեգին Խաչատուրեան (Տրապիզոնի) պատրիարքի տեսլականին՝ Արմաշու երբեմնի դպրեմանքին գաղափարը անպայման ապրեցնելու Սկիտարի բարձունքին: Մինչ այդ, եկեղեցի հասած են դպրեմանքի (որ այլեւս երկսեռ լիւս է եւ չունի հոգեւոր կրթօճախի բնոյթ) սաները, որոնք առաւուռուն Շիշլիի գերեզմանատան մէջ այցելութիւն տուեր էին վախճանեալ պատրիարքներու շիրիմներուն: Բոլորին ներկայութեան՝ Սահակ պատրիարք «Օրհնութեան գիր» շնորհած է եկեղեցւոյ բազմամտայ ծառայ Արշակուրդի սրկ. Պիլիքիշմանի (յիսուն տարուան ուրարակիր): Այնուհետեւ կատարուած է հոգեհանգստեան արարողութիւն՝ դպրե-

մանքի վախճանեալ վանահայրերուն յիշատակին: Յետ եկեղեցական արարողութեանց, սիրոյ սեղան սարքուած է յարակից «Կիւլպէնկեան» սրահին մէջ: Այստեղ սրտի խօսքեր արտասանած են Յարութիւն վրդ., Վահրամ սրկ. Լիւլեճեան եւ Սահակ պատրիարք, իսկ մեծարեալ յայտնած է իր շնորհակալութիւնները: Այս բոլորէն ետք, ներկաները մէկտեղուած են եկեղեցւոյ պարտեզը, ուր կայացած է դպրեմանքի «Շրջանաւարտներու օր»-ը: Պարգեատրուած են իրենց շրջանաւարտութեան 50 եւ 25 տարիները բոլորողները: Սրտի խօսքերով հանդէս եկած են Ս. Խաչ դպրեմանքի տնօրէն Հայկ Սերբան Գլըճը, ինքնակալութեան ատենապետ Ազատ Տեմիրճի, Սանուց միութեան ատենապետ Նուպար Տիկեճեան: Հուսկ բանքը արտասանած է պատրիարք հայրը:

ՊՈՒՆՅՅ Կեդրոնական Սանուց միութեան սրահին մէջ, 19 Յունիսին, Սահակ պատրիարքի ներկայութեամբ բացումը կատարուած է լուսանկարչական ցուցահանդէսի մը՝ «Ինքնութիւն եւ որոնում» խորագրով: Ձեռնարկը կազմակերպուած է «Պոլիս լուսատու» համախմբումին կողմէ, որ կենսալի կոչուած էր քանի մը տարի առաջ՝ 15 արհեստավար լուսանկարիչներու կողմէ: Անոնցմէ իւրաքանչիւրը այս ցուցահանդէսին մասնակցած է երկու լուսանկարով: Ողջոյնի խօսք արտասանած է Սարգիս Կիրեճ: Խօսք առած է նաեւ պատրիարք հայրը, որ, յիշելէ ետք հայ լուսանկարչութեան հարուստ ասանդակները, ըսած է թէ «լուսանկարչութիւնը պահը որսալու եւ ժամանակը կանգնեցնելու արուեստն է»: Կազմակերպիչները իրենց լուսանկարներով ուզած են սեւեռումի ներթարկել երկու բան. Նախ՝ հայկական ինքնութիւնը, հայոց թողած հետքերը մշակոյթի ու պատմութեան վրայ, եւ ապա՝ Իսթանպուլի առօրեայ բազմաշերտ կենսալի թաքնու երեսները...: Ցուցահանդէսը բաց մնացած է մինչեւ 26 Յունիս:

ՊԵՏՐՈՒՄ ԲԵՐՈՒՄ (երբեմնի «Բերա» թաղաշրջանը) լատինաց ՄԵՆՍՅԱՆ Անթուան եկեղեցւոյ մէջ, 18 Յունիսին, Ֆերիդիդի «Վարդանանց» երգչախումբը արտակարգ համերգ մը տուած է, ընկերակից ունենալով «Պորուսան» սենեկային նուազախումբը: Երգչախումբը ղեկավարած է Սիպիլ Արսենեան: Մեկնաբանուած են դասական գործեր Պախեն, Մոցարթէն, Ֆորելէն, Սայկունէն եւ այլոցմէ, բայց նաեւ՝ Դաւիթ Հալլաճեանէն: Համերգի աւարտին՝ գնահատական խօսքերով իր տպաւորութիւնները արտայայտած է Սահակ պատրիարքը:

ԽՍԿԵՆՏԵՐՈՒՄ մէջ թէւ կ'ապրին սակաւաթիւ հայեր, սակայն դեռ կը պահպանուի ու «գործուն» կը սեպուի տեղույն Ս. Զառնատու Մանկանց եկեղեցին: Բայց անկախ 2023-ի փետրուարեան մեծ երկրաշարժէն բաւական վնասուած էր ու կը կարօտէր վերանորոգումներու: Այս նպատակով է որ տեղույն Շիսկան խորհուրդի ատենապետ Երանոս Թապաշեան, ընկերակցութեամբ Հայաք Նահանգի եկեղեցեաց հոգեւոր հովիւ եւ գաւառի համայնքներու տեսուչ Տ. Աւետիս քնյ. Թապաշեանի, 23 Յունիսին այցելած է Պոլսոյ հայոց պատրիարքին, Քնյալը կղզիի պատրիարքական ամառանոցին մէջ: Այցելուները յայտնած են որ պետութիւնը հինգ միլիոն թրքական լիրայի ժամանակակիցներուն մը խոստացած է իրենց՝ եկեղեցւոյ եւ յարակից շինութեանց վերակառուցման համար, սակայն այդ գումարը նախատեսուած ծախսերուն հազիւ մէկ տասներորդը կը դիմագրաւէ: Ուստի՝ կը կարօտին համայնքային օժանդակութեան: Սահակ պատրիարք խոստացած է պատրիարքական աթոռին աջակցութիւնը չխնայել՝ հարկաւոր նորոգութեանց ձեռնարկելու համար: Յիշեցնենք, որ Իսկեստերուսի եկեղեցին ամբողջ գաւառի հիմնարկն էր մինչ փոխան այն միւս հարկաւորներուն, որոնք չքացան 1915-ի Մեծ Եղեռնէն ու Կիլիկիոյ հայաթափումէն ետք...:

Լ. Շ.

Յ Ե Տ Ը Ն Տ Ր Ա Վ Ա Ն

«Ձիեր գողանալու համար չէ, որ մարդկանց հանում են կայսաղան, այլ որպէսզի այլեւ ձի չգողանան»:
ԱՆճրիական

ՈՒՐԵՆ ԶՈՒԿԿԻՄԵԱՆ

որ որեւէ փոփոխութիւն չի եղել 4331 սխալ հաշուարկուած քուէների առիթով, եւ հաստատուեց Սահմանադրական դատարանի կողմից, ուստի խորհրդարան մտնելու իրաւունք են ստանում «ԸՊ»-ն (49,74%) եւ «Ուժեղ Հայաստան» (23,27%), «Հայաստան» դաշինքները (9,92%), իսկ «Բարգաւաճ Հայաստան»ը կրկին չի աւելցնում անհրաժեշտ 4 տոկոսի շեմը այդ խմբին մասնակից լինելու:

Սկզբունքօրէն անհանդուրժելի է, երբ անելի քան տասնեակ համալսարան, բարձրագոյն տարբեր ուսումնական, գիտութիւնների կաճած եւ բազում գիտական եւ հետազոտական կեդրոններ ունեցող երկրում չեն կարողանում քուէարկութեան արդիւնքը թղթի վրայ գրանցել առանց սխալի, որի հետեւանքով վերահաշուարկը ձգձգուեց եւ մէկ շաբաթ, թէւ գիտակից եւ, որ անսխալ մարդ չկայ, բայց ոչ՝ երբ գործը անհատական բնոյթի չէ:

ԿԸՅ-ը ի վերջոյ եզրակացրեց, որ 3 ընտրական տեղամասերում եղած խախտումների հետեւանքով քուէարկութեան անվաւեր ճանաչումը չի ունենալ որեւէ ազդեցութիւն ընդհանուր արդիւնքի վրայ, հետեւաբար տեղի չ'ունենար վերաքուէարկութիւն, ինչպէս պահանջած էին ընդդիմադիր ուժերը:

Շարունակութիւնը տեսնել էջ 4



Թէւ քաղաքական կրքերը չեն հանդարտուում, իսկ մտաւոր պառակտումները անելի թեժացած են ՀՀ ընտրական Կեդրոնական Յանձնաժողովը (ԿԸՅ) ծանուցեց ընտրութիւնների վերջնական արդիւնքները, նշելով եւ ընդգծելով,

ԾԱՂԻԿՈՎ ԱՂՋՆԱԿ ՄԸ

(Լուսավորման մեջ հնչող խաղաղության պատգամ մը)

Այս քանակը երեսուն տարի է, որ կ'ապրին ժընե ու կը բնակին ՄԵՆ-ժան (Saint-Jean) զբոսայգիին մօտակայքը:

Տարիներու ընթացքին այս վայրը ինծի հոգեհարազատ դարձած է: Կը ճանչնամ անոր ճեմուղիները, դարաւոր ծառերը, եւ նոյնիսկ գարնանամուտին շքեղ գոյներով ծաղկող վերափայտները:

«Տեսնել աշխարհը աւագի հատիկի մը մէջ, իսկ երկինքը՝ վայրի ծաղիկի մը մէջ: Ափիղ մէջ առնել անծիրն անհուն, իսկ յաներժութիւնը՝ ակնթարթի մը մէջ»:

Չբոսայգիին մէջ քանի մը արձաններ կան: Անոնցմէ ոմանք բարձր պատուանդաններու վրայ կանգնած են եւ կը յիշեցնեն ժընե քաղաքի այն նշանաւոր անձնաւորութիւնները, որոնք մեծ ծառայութիւն մատուցած են քաղաքին: Ուրիշներ, սակայն, գրեթէ աննկատ կերպով միաձուլուած են բնութեան հետ:

Կեանքի մէջ կան երեւոյթներ, որոնք կողքով ամեն օր կ'անցնին, կը տեսնենք գաղտնի առաջ իսկապէս տեսնելու, կամ աւելի ճիշդ՝ ընկալելու: Անոնք այնքան սովորական մասը կը կազմեն մեր աշխարհին, որ մեր հայեացքին համար իսկութեան մէջ կը դառնան անտեսանելի: Թէ ինչո՞ւ է այդպէս, դժուար է ըսել: Թերեւս պետք է գայ ճիշդ այն յատուկ պահը, երբ այնքան ծանօթը յանկարծ կը թուի օտար, մինչ այդ լուռ մնացածը, մեր ընկալումի եւ ուշադրութեան լուսանցքին մէջ նետուածը կը սկսի խօսիլ մեզի հետ: Արդարեւ կան բաներ, որոնք մեզի չեն յայտնուիր այն պահուստ, երբ անոնք կը հանդիպինք, այլ միայն այն ատեն, երբ մեր ներաշխարհով պատրաստ կ'ըլլանք գաղտնի իսկապէս տեսնելու եւ ընկալելու:



«Ծաղիկով աղջկա մը» (Fillette à la fleur, 1970) - Ուրսուլա Մալբինի պղնձաձուլով քանդակը. ՄԵՆ-ժան զբոսայգի, Ժընե:

Այդպէս պատահեցաւ այն արձանին հետ, որ չի գտնուիր զբոսայգիին կեդրոնական մասը, այլ անոր հարաւարեւելեան կողմը, շատ մօտ Promenade des Lavandières-ին եւ Pont de la Coulouvrenière-ին: Այդտեղէն գեղեցիկ տեսարան մը կը բացուի դէպի Ռոն գետը եւ պատմական Bâtiment des Forces Motrices շէնքը: Եթէ զբոսայգիի կեդրոնական մասէն դէպի Seujet դպրոցը ուղղուինք, ճեմուղիներէն մէկը մեղմօրէն վար կ'ընելն Ռոն գետի ուղղութեամբ:

Այդ պրոնգաձույլ արձանը, որուն մասին կը խօսիմ, գետեղուած չէ բարձր պատուանդանի մը, այլ ցած քարա-յատակի մը վրայ՝ ուղիղ ճամբուն ընելով: Այդ պատճառով ալ գրեթէ աչքերու հարթութեան վրայ կը հանդիպի անցորդին, որ թերեւս կը բացատրէ, թէ ինչո՞ւ շատերը աննկատ կ'անցնին անոր ըովէն: Ան չի պարտադրիր իր ներկայութիւնը. ան կը սպասէ, որ յայտնաբերեն զինքը:

Այդպէս ալ եղաւ այդ Կիրակի առաւօտեան: Թէ ինչո՞ւ եւ մանաւանդ այդ օր կանգ առի անոր առջեւ՝ դժուար է ըսել: Մոգական պահ մը կարծեմ մագնիսացուց զիս՝ ստիպելով բանալու տեսողութեան վարպետը եւ ընկալելու այն, որ տարիներ ի վեր ինծի կը թուէր, թէ կը տեսնեի...: Չբոսայգիին նոյնն էր, նոյնն էին նաեւ ճեմուղիները, այդտեղ տեղադրուած արձանները, բայց այս անգամ նոյն աչքերով չէի նայիր անոնց, յատկապէս ամենամանջան թուող այն արձանին, որ այդ պահուն ուղղակի հմայած էր զիս:

Առանց շտապելու սկսայ դիտել զայն բովանդակ ուշադրութեամբ եւ ներքին ակնածանքով: Որքան աւելի երկար կը նայեի, այնքան աւելի կը զգայի, թէ ան պարզ արձան մը չէր, այլ ներկայութիւն մը, որ իր լուսութեան մէջ շատ ըսելիք ուներ: Կարծեմ այդ բոլոր տարիներուն ան համբերութեամբ կը սպասէր, որ վերջապէս կանգ առնէ ու հանդիպիմ իրեն: Արձանը ստեղծագործութիւն է քանդակագործ Ուրսուլա

ԳՈՎՏ. ԱՐԷԼ ՔՅՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ (Ժընե)

Մալբինի (Ursula Malbin), որուն ան տուած է «Ծաղիկով աղջկա մը» (Fillette à la fleur) անունը: Քանդակը ստեղծուած է 1970 թուականին: Անոր բարձրութիւնը մօտաւորապէս 106 սմ է եւ կը պատկանի ժընե քաղաքի ժամանակակից արուեստի հաւաքածոյին: Նշուած թուականէն իվեր ան կը գտնուի այս զբոսայգիին մէջ՝ դառնալով այդ վայրին լուռ եւ անբաժանելի ներկայութիւններէն մէկը, որ չի մաշի ժամանակին հետ, այլ իր շուրջը գտնուող հաստաբուն ծառերուն հետ ինք ալ տարուէ-տարի աւելի խոր կ'արժատաւորուի զբոսայգիին տարածութեան մէջ:

Տարիները անդամ անցած են. մարդիկ հերթով եկած են ու գացած, եղանակները՝ մերթ խոստաշունչ, մերթ խաղաղ, գիրար յաջողելով՝ փոխուած են անկասելի հոսանքով: Բայց ան մնացած է նոյնը՝ խաղաղ լուսութեան մէջ դիտելով աշխարհը, առանց դատելու եւ առանց խօսելու: Թերեւս այդ լուսութեան մէջ է անոր իսկական ներկայութիւնը՝ ոչ իբրեւ պարզ առարկայ, այլ որպէս կենդանի յիշողութիւն մը, որ քարի եւ պղինձի մէջ կը շարունակէ չնչել՝ պահելով մարդկային իրականութեան մէկ նուրբ երեսը, մէկ ակնթարթային պարագիծը, որ չի կորսուիր ժամանակի հոսքին մէջ, այլ ստոյգ կը դառնայ անոր անբաժանելի մէկ մասը:

Յմայուած կը դիտել արձանը ու ինքնաբերաբար հարց կու տայի. ո՞վ է այս փոքրիկ աղջկա: Ինչո՞ւ մէկ ձեռքով կը բարձրացնէ ծաղիկ մը, իսկ միւս ձեռքին՝ տիկնիկ մը: Ի՞նչ պատմութիւն կ'ուզէ պատմել ան մեզի, մանաւանդ այսօր, երբ աշխարհը այնքան շատ ցաւի, բռնութեան եւ պատերազմներու մէջ կը գտնուի:

Այդ պահուն յանկարծ մտրով սանցաւ հայրենի մեծանուն գրող Նայիրի Չարեանի յետպատերազմեան տարիներուն գրած այն յուզիչ բանաստեղծութիւնը՝ «Խաղաղութեան աղանիս» խորագրով, որ ի տղայի տիոց ստրված էր: Բանաստեղծը այնտեղ պատկերաւոր ու կենդանի գիծերով կը ներկայացնէ 1949 թուականին Փրակայի մէջ գունամարտած խաղաղութեան մեծ համաժողովը. հանդիսաւոր դահլիճ մը, ուր հաւաքուած են աշխարհի գանազան երկիրներէն եկած քաղաքական գործիչներ, բարձրաստիճան զինուորականներ, բազմաթիւ մտաւորականներ ու գրողներ: Եւ հահ, նիստերէն մէկուն ընթացքին, թեմ կը բարձրաձայն վեցամեայ աղջկա մը՝ իր կուրծքին ամուր սեղմած ճերմակ տիկնիկ մը: Անոր աչքերուն մէջ նկատելի էր մահաբեր պատերազմին պատճառած վախն ու կորուստի ցաւը: Ուստի, դիմելով հորիզոնին Միութեան հերոս զօրահրամանատար Ֆեոտորովի՝ ան մանկական պարզ, բայց ճշմարտութիւն դրսեւորող ձայնով կը ըսէ՝

«Թե՛րի, չուսն՛ես նա հայր... Սպաննուած է նա Աթենքում... Եւ տիկնիկիս եւ ի՛նձ համար խաղաղութիւն են ուզում»:

Անկարելի էր չմտածել, որ նշուած բանաստեղծութեան եւ «Ծաղիկով աղջկա մը» ստեղծագործութեան միջեւ կային բովանդակային ընդհանրութիւններ՝ անկախ անկէ, թէ ո՞ր կամ ո՞ր հեղինակին կողմէ յօրինուած էին անոնք: Խաղաղութեան աղանիս, ճիշտնայնիքով, անմեղմաբար աղջկա մը, ծաղիկն ու տիկնիկը դարձրու խորքէն եկող այն խորհրդանշաններն են, որոնք գուցէ մարդոց համար դարձած են ամենահոգեհարազատ պատկերները կեանքի պահպանման եւ խաղաղութեան իտեալի արտայայտութեան մէջ:

Արուեստը սահման չունի, որովհետեւ ան կը պատկանի ոչ թէ աշխարհագրութեան, այլ՝ մարդկային հոգիին: Ստեղծագործութիւնը, ըլլայ քանդակ, նկար, վէպ կամ բանաստեղծութիւն, իրականութիւն չի ստեղծեր: Իրականութիւնն է, որ կը ծնի գայն: Մարդկային փորձառութիւնը, յոյսն ու յուսահատութիւնը, սերն ու կորուստը, տուայտանքն ու կարօտը, խաղաղութիւնն ու պատերազմը՝ հահ այն հողն է, ուրկէ կը ծիլ արուեստը: Սակայն երբ ստեղծագործութիւնը լոյս աշխարհի կու գայ՝ ընդամենը արուեստի պարզ գործ մը չէ: Ան կը վերածուի հայելի մը, որ ոչ միայն կ'արտացոլացնէ իրականութիւնը, այլ նաեւ կ'օգնէ մեզի տեսնելու այն, որ առօրեայ մէջ յաճախ անտեսանելի կը մնայ: Արուեստը կը բացայայտէ իրականութեան ներքին իմաստը, կը հարցաքննէ եւ երբեմն ալ կը գերազանցէ զայն՝ դառնալով մարդու ներաշխարհը լուսաւորող լուսարձակ մը, ինքնաճանաչողութեան ուղեկից եւ գոյութեան իմաստը որոնող ձայն մը:

Անգամ մը եւս կը դիտեմ արձանը ու կրկին կ'անդրադառնամ, որ արուեստի որոշ գործեր իրենց մեծութիւնը են պարտադրելի դիտողին: Անոնք լուռ կը սպասեն, մինչեւ մենք պատրաստ ըլլանք գանտն իսկապէս ընկալելու: Թերեւս անոնց ճշմարտութիւնը չի բացայայտուիր այն օրը, երբ գաղտնի առաջին անգամ հարեանցի կը տեսնենք, այլ այն պահուն, երբ մեր հոգին պատրաստ կ'ըլլայ զայն ընդունելու: Փաստօրէն արձանը, որուն առջեւէն բազմիցս անցած էի, բոլորովին չէր փոխուած. փոխուած էր իմ հայեացքը:

Արձանը չի ներկայացնէր հերոսուհի մը, ոչ ալ յարթա-նակած անձ մը կամ նահապետ մը: Ան փոքրիկ աղջկա մըն է՝ խոջեղի, փիսրուն, բայց միաժամանակ՝ ուղիղ ու արժանապատիւ հպարտութեամբ կանգնած: Ձախ ձեռքով ան վեր բարձրացուցած է ծաղիկ մը՝ կեանքի, գեղեցկութեան եւ յոյսի հնագոյն խորհրդանշաններէն մէկը: Իսկ աչք ձեռքով բռնած է տիկնիկ մը, որ մանկութեան, գուրգուրանքի եւ ապահովութեան խորհրդանշանն է: Այս երկուքն ալ կեանքի այն արժէքներն են, որոնք պատերազմներու ընթացքին յաճախ առաջինն են, որ կը գոհուին:

Յատկապէս մեր օրերու պատերազմներու եւ հակամարտութիւններու լոյսին տակ՝ Ուրբանիոյ, Կազայի, Սուտանի, Իրանի, Լիբանանի եւ աշխարհի բազմաթիւ այլ վայրերու մէջ, այս քանդակը կարծեմ կը ստանայ խոր իմաստ մը: Արդարեւ, մեր առջեւ չի ներկայաւոր աղջկա մը, որ պարզապէս իր մանկական խաղերով տարուած է: Ընդհա-կառակը՝ ան կը խորհրդանշէ այն միլիոնաւոր մասնակները, որոնք մանկութիւնը բռնութեան եւ պատերազմներու ստուերին տակ կ'արիւնին:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԵՏՔ Ե ՎԵՐԱԳՏՆԵ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ...

Շարունակուած էջ 2-էն

Անկասկած, այս ընտրանքները իրենց համար անփոխարինելի սրբութիւններ են, անվիճելի կռուաններ, բայց հայրենիքին գոյութիւնը, հզօրութիւնը, գերակայութիւնը եւ անժխտելիութիւնը չեն կրնար վերածուիլ «աժան աճուրդահական» սակագիններու եւ մուրհակներու, որոնց կենսունակութեան եւ յարատեւութեան համար կարելի չէ ընկրկիլ կամ նահանջել որեւէ արգելի կամ պատնէշի դիմաց, ուրկէ ալ ան բուսնի կամ աճի, որովհետեւ ան է միակ ճամբան, որ կրնայ հայրենիքը պահել իր ամբողջականութեան, ճկունութեան եւ եւութեան վեմի վրայ, աներեր եւ անցնող խարիսխներով:

Խորհրդարանական ընտրութիւններու 7 Յունիս 2026-ի վերջնական (նոյնիսկ անմիջական) արդիւնքները տակաւին չամբողջացած, արդէն, ահաւոր ու խժարուր գոռոցները, իրենց գանազան ու բազմաբնոյթ արձագանգներով, ժխտրային իրարանցում ստեղծած էին, յատկապէս ընդդիմադիրներու կողմէ, որոնք իշխանութիւնը կ'ամբաստանէին ու կը դատապարտէին անարդարութիւններու եւ կեղծապատիրութիւններու հազարամեկ «մեղք»երով, առանց որեւէ շօշափելի ու գործնական ապացոյցներու:

Մինչ այդ, իշխանութիւնը կ'ոգեկոչել որ ու կ'ողջունել իր ԼԻԻՐԸՄ յարթանակը ցոյց տալով, իր առաջնահերթութեան վարկանիշներով եւ իր առաւելութեան ցցուն տունալներով:

Իրականութիւն մը, որ որեւէ ձեռքով եւ եղանակով կարելի չէր շրջանցել կամ ուրանալ, այնքան ատեն որ պատկերը յստակ է իր բովանդակ պարփակութեամբ եւ ամբողջական տնօրինութեամբ:

Այստեղէն եւ այս փուլէն արդէն «ծնունդ» կ'առնէր մեր մտավախութիւնը (որուն մասին լուսարձակած էի մեր վերջին գրութիւններէն մէկուն մէջ), թէ՛ Յայաստանը ինքզինք պիտի գտնէ իր ու վաղանգուոր մարտահրաւիր(ներ)ի մը առջեւ, երբ իշխանութիւնը ԱՆԵՐԿԲԱՅ յարթանակի յաջողութիւն կ'ոգեկոչէ, իսկ ընդդիմութիւնը՝ ԱՆՅԵՐԵԼԻ ճախողութիւն:

Պիտի չանդրադառնամ, ոչ ալ հետեւիմ կամ մեկնաբանեմ իշխանութեան տարած յառաջընթացն ու գրուած դիրքաւորումը, բայց չեմ կրնար անտարբերութեամբ անցնիլ կամ անտեսել այն վերիվայրումները, որոնց ենթարկուեցաւ եւ անոնց «բոց»երուն մէջ ինքզինք այրեց եւ այրեցուց «ընդդիմութիւն» կոչուած հոսանքը իր աճարարութեամբ, անճոռնիութեամբ ու խաղութեամբ, իր համակիրները եւ հետեւորդները առաջնորդելով ու մղելով դէպի քարքարոտ ճանապարհներ:

Ինչո՞ւ այս իրատապ ընդգծումը ու անխուսափելի հաստատումը, պարզապէս անոր համար, որ դր'ը, ընդդիմութիւն, երբեք չկրցաք ԻՍՎԱԿԱՆ ընդդիմութեան տարագով եւ ոգիով հանդէս գալ, ոչ երբէկ, ոչ ալ այս ընտրութիւններուն, այլ՝ կառնչեցաք փութ ու նեխած, այլասերած եւ անհաշտ հարուածներուն հետ, որոնցմէ (առաջինը եւ ոչ վերջինը) կը կոչուէր Ռոպերթ Զոհարեան, (ան)մարդ մը, (չ)նախագահ մը, (չ)կերպար մը եւ (չ)արարած մը, որ նախ իրաւունք չուներ ոչ Արցախի (որուն՝ դաւաճանեց), ոչ ալ Յայաստանի նախագահ հռչակուելու (որուն դաւադրեց), եւ այսօր, առանց իպսելու, ինքզինք կը յաւակնի յայտարարելու Յայաստանի (չ)վարչապետական թեկնածու:

Կա՞յ աւելի ստորնացուցիչ, վարկաբեկիչ ու նուաստացուցիչ որակում, երբ «Ռոպ»ը իր հազուատուով ու մերկութեամբ կը ցցուի բոլորին առջեւ, իբրեւ ՄԱՐԴԱԿԵՐՊ մը, երբ մարդիկ, ՅԱՅԵՐ, մաքրագործած է իր (չ)նախագահական դիմագիծով, այլախոսակարան արտաքինով, տգիտային հայալեզուով, բարբարոսային վարուելակերպով, տակաւին յաւակնելով Յայաստանի եւ Արցախի (՝) պաշտպան կանգնելու:

Այսպիսի ահաւոր հայաստան մը, ոճրագործ մը, հայադէմ մը, հայաբեկոր մը ինչպէ՞ս կրնայ Յայաստանին (ալ ո՛ր մնաց Արցախին) օգտակար դառնալ, երբ ժամանակները ցոյց տուին, որ ան, եւ իր նմանները, ինչպիսի՞ ապերախներ, ճիւղներ եւ անմարդկայիներ եղան:

Յետ ընտրական շրջանը սկսած ըլլալով, թեկուզ քուէներու վերահաշուարկներով, հոն ուր պատճառներ կան եւ անկործանելի է արդար գտնումներ, առիթներ օգտագործելով, ներքին՝ Ե երկիրը ապակայունացնել, յատկապէս Զոհարեանի ման արկածախնդրով մը, որ կը սպառնայ իշխանութեանը վրէժ (՝) լուծել, իշխանափոխութիւն մուրալ, իր կաշառակերային միջոցներով, ինչպէս ընտրական ստուգատեսի պարագային, իր կարգին լծելով պատեհապաշտ հետեւորդներ, նոյն իր ապօրինազանցութիւնները շարունակելու յամառութեամբ:

Մարդիկ, որքա՞ն հակոյր եւ անուղղայ պետք է ըլլան դիմելու նման աճարարութիւններու, ամբոխավարութեան եւ ոտնձգութեան, երբ աշխարհի մեծամեծ պետութիւնները եւ ուրիշներ, միջազգային չափանիշներով ողջունած ու շնորհաւորած են իշխանութեան յաջողութիւնները:

Վերջին հաշուով, մինչեւ երբ պիտի շարունակուին թունաւորումները, ժախտութիւնները ժողովուրդին ու հայրենիքին նկատմամբ, արիւնտու նկարագիրներու ձեռամբ, որոնք նկատմամբ այլեւս պետք է կիրարկուի խստագոյն եւ արագ պատժամիջոցներ, առաջին հերթին անոր դէմ, որուն կեանքը պատուած է սեւագոյն էջերով:

Խորհրդարանը կամ Ազգային ժողովը միակ տեղն է, ուր ինդորոյ առարկայ հարցերը կը քննարկուին ու կը լուծուին (կամ ոչ), հեռու փողոցային խաչատու եւ անհաճոյ վարժանքներէն, որոնք ցարդ ոչինչ բերին հայրենիքին, բացի խայտաբղէտ պատուհասներէն:

Իշխանութիւնը, գլխաւորութեամբ վարչապետ Նիկոլ Փաշինեանի, պետք է այլեւս խուսափի կրքոտ ու ջղոտ յայտարարութիւններէն ու սպառնալիքներէ, այնքան ատեն որ աստուց ՓՎՓԿԱԿԱՏ տարբերակները աւելի հակաբոցոտ ու պիտանի են, քան ոչ երկիրը, ոչ ալ ժողովուրդը կրնան այլեւս հանդուրժել որեւէ անիմաստ ու բռն մագլցումներու կրկնութիւնները:

Անոնք են հնարքներն ու մարդանքները, որոնք կայունութիւն, բարեբերութիւն ու խաղաղամտութիւն կրնան պարգեւել բոլորին, եթէ կողմերը, ուղղակի թէ անուղղակի մասնակիցները, լուրջ են, անկեղծ եւ իրապաշտ:

ՅԵՏԸՆՏՐԱԿԱՆ

Շարունակած էջ 2-էն

Անսկզբունք, անբնական քաղաքական մթնոլորտը, որ կայացել էր ընդդիմադիր-իշխանական թեւերի միջեւ, նողկանքի էր արժանի: Բացակայ էին յարգանքի ու պատշաճության նուազ կանոնները: Ամիսներ տեւող ընտրապայքարի օրերին կողմերի մէջ որեւէ մտքի փոխանակում չէ եղել, իսկ հեռատեսիլով հանրային բանավեճը՝ դարձել փոխադարձ անվայել լուտանքի ու նեմագումի ամպիոն:

Շատերն են անդրադարձել այդ փաստի անպատշաճ մակարդակին եւ խնդրող կարեւոր համազգային աստիճանի լինելը լուրջ ուշադրութեան է արժանի:

Բազում են նաեւ արձագանգներ դրսից թէ ներսից, ունենալով զանազան նպատակ ու ցուցմունք: Ոմանք այն կարծիքի են, թէ ընտրութիւնները տեղի են ունեցել անպատշաճ պայմաններում, իսկ ոմանք մասամբ կասկածի տակ են դնում ընտրական գործընթացի ազատ, արդար եւ մրցանակային բնույթը:

Անպակաս են հիւսիսից հնչած սպառնալիքները Յայաստանի՝ Երրորդային նկատմամբ որոշ հակումներ ցուցադրելու համար, թեպէտ հայ իշխանաւորները բազմիցս եւ ամենամիտ յայտարարեցին, որ մտադիր չեն հեռանալ Մոսկուայի ղեկավարութեամբ գործող Եւրասիական տնտեսական միութիւնից, բայց ուղիղ խօսքը բոլորին հասանելի չէ եւ շարունակուեցին պատժամիջոցների կիրառումը հայ գիւղամերքենների առաքման արգելումով:

Միւս կողմից, Երրորդային խոստանում է աջակցել ՀՀ-ին՝ Ռուսիոյ աճող ճնշումին դիմակայելու:

Չեմ հաւատում, թէ այս երկու հսկանքները եւ նրանց հետ բոլոր միւսները անհանգստացած լինե մէկ ակնթարթ անգամ մեր երկրի բարեկեցութեան կամ օգտակար լինելու իմաստով: Մեր նկատմամբ ցուցաբերած կեղծ մտահոգութիւնների ակունքը իրար հակադրուելու համար լրացուցիչ գործիք ունենալն է, ոչ ատել եւ ոչ պակաս:

Մեր նոր ընտրելի պետական գործիչները պարտաւոր են հաշուի առնել՝ ակազնի օղ անելով հնացած այն աստիճան ու հանգամանքը, թէ երկրների յարաբերութիւնների պարագային բոլոր զգացումները մեռած են եւ գործում է միայն շահոյթը: Նշենք, որ Արտաքին հետախուզութեան ծառայութեան ռուս տնօրէնը յայտնեց, որ թէ ՀՀ ղեկավարութիւնը կողմնորոշուի բացառապէս Արեւմուտքի օգնութեան եւ աջակցութեան վրայ, ապա մեծ սխալ ու վերջը վատ է:

Լուրջեան ջմատուկեց ընդդիմադիր ամբիոնը՝ 18 խմբից բաղկացած անհամատեւ ուժը, որ բարձրաձայնում է, թէ ընտրութիւններն անօրինական են, քանզի, ըստ իրենց գնահատականի, տեղի են ունեցել մի շարք համակարգային խախտումներ, որոնք ենթադրեալ ազդեցութիւն են ունեցել ընտրողների վրայ:

Որքաչի է, որ մեր երկրում դեռ կան բնակիչներ, որոնք կարողանում են համակրել նախկիններին, մինչեւ իսկ ընտրական խումբ կազմել նրանց հետ եւ պայքարել ինչ որ պաշտօնի համար, մոռանալով Հոկտեմբեր 27-ը եւ միւս ոճիրները, իսկ 18 ընտրական ընդդիմադիր խմբի ներկայութիւնը ընտրացուցական, ընդամենը 3 միլիոն բնակչութեան համար, անհեթեթութեան վերջին անյայտ տեսակն է: Աւելի խոհեմ եւ մտաւոր լինելու իրաւունք ունենք:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

- Աթանասեան Յարութիւն Գ., «Ատաբազարէն Տեր Չօր», խմբագիր, յառաջաբանի եւ ծանօթագրութեանց հեղինակ՝ Միհրան Միհասեան, «Յայոց ցեղասպանութեան թանգարան-հիմնարկ» հիմնադրամի հրատարակչութիւն, Երեւան, 2026, 568 էջ (Մեծ Եղեռնէն վերապրողի 1919-ին գրած ակնարկի վկայութիւնները, մեծաքանակ ծանօթագրութիւններ, լուսանկարներ, քարտեզներ, յաւելումներ):

- Գաթրճեան Աւօ/Աւետիս, «Սուրիահայ պարբերական մամուլի մատենագիտութիւն (1912-2026)», խմբագիր՝ Ալլարթ Խառատեան, պատասխանատու խմբագիր՝ Արաքս Փաշայեան, «ՎՄՎ-փրինթ» հրատարակչութիւն, Երեւան, 2026, 383 էջ (17 x 24 սմ.) (1868-2026 ժամանակաշրջանին Սուրիոյ մէջ լոյս տեսած 228 հայկական (հայերէն, հայատառ թրքերէն, հայերէն-արաբերէն) պարբերականի մակարդակի մատենագիտութիւնը, շուրջ 300 նկար): Հրատարակուած է ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան հիմնարկի գիտական խորհուրդին որոշումով՝ Հայագիտական ուսումնասիրութիւնները ֆինանսաւորող համահայկական հիմնադրամի դրամաշնորհով:

- «Գուրգէն Եանիկեան - Երկեր - Ա. հատոր», կազմող՝ Սաֆօ Օզկայեան, ներածականը՝ Կարօ Վարդանեանի, հրատարակչութիւն Լիբանանի «Սփինք» պարբերաթերթի, Երեւան, 2026, 398 էջ (16,5 x 23,2 սմ.) (ազգային հերոս Գուրգէն Եանիկեանի ընդարձակ կենսագրութիւնը, 27 Յունուար 1973-ի վրիժառական արարքէն առաջ գործունէութիւնը, մահուան արձագանգները հայկական մամուլին մէջ, տպագրուած պատմութիւնները, բանաստեղծութիւնները, հրապարակագրական էջերը, փաստաթուղթեր, սեւ-ճերմակ բազմաթիւ լուսանկարներ):

- Թեղոյեան Պերճ, «Ինքնակենսագրութիւն եւ պատահիկներ յուշերու», տպարան՝ «Աֆրիքըն փրետ», խմբագիրներ՝ Վաչէ Ղազարեան եւ տիկին Շաքէ Մարգարեան, հրատարակիչ՝ տիկին Սեդա Սամուելեան-Թեղոյեան, Գահիրէ, 2026, 134 էջ (17 x 24 սմ.) (եգիպտահայ գաղութ, մասնաւորապէս Գահիրէի ՀԲԸՄ-ի նախապետի ինքնակենսագրութիւնն ու հասարակական եւ հրապարակագրական գործունէութեան յուշեր):

- Կեղոյեան Կարոյն Ն., «Ուրուկուեյ 1965 - Հայոց ցեղասպանութեան առաջին ճանաչումը», յառաջաբանը՝ Վանիա Մարգարեանի, սպաններէն թարգմանեց Յովիկ Բողոկեան, խմբագիրներ՝ Գեորգ Եազըճեան, Արեւշատ Միհասեան եւ Շուշան Սիրուեան, «Էտիթ փրինթ» հրատարակչութիւն, Երեւան, Մարտ 2026, 294 էջ (16,7 x 21 սմ.) (Հայոց ցեղասպանութիւնը առաջինը ճանաչած պետութեան՝ Ուրուկուեյի համապատասխան օրէնքի գործընթացի մարտչական պատմութիւնը, աղիսակներ, ձեռնարկներու եւ որմագրներու լուսանկարներ, օգտագործուած աղբիւրներու, գրականութեան եւ յաւաստներու ցանկեր):

- Մումճեան Կարապետ Գ. (Moumjdjan Garabet K.), «Հայեր եւ երիտթուրքեր - Հայ յեղափոխական դաշակցութիւնը եւ սահմանադրականութիւնը Օսմանեան կայսրութեան մէջ 1895-1908» (Armenians and Young Turks: The Armenian Revolutionary Federation and Constitutionalism in the Ottoman Empire 1895-1908), խմբագիր՝ Թամար Պոյաճեան, «Հայերը արդի եւ վաղ արդի աշխարհին մէջ» մատենաշար, մատենաշարի խմբագիր՝ Պետրոս Տէր Մաթոսեան, Bloomsbury Publishing հրատարակչութիւն, Լոնտոն - Նիւ Եորք, 30 Ապրիլ 2026, 312 էջ (15,5 x 23,2 սմ.) (ՀՀ-ի իրօքիատ յարաբերութեան պատմութիւնը մինչեւ 1908-ի օսմանեան յեղաշրջումը) (անգլերէն): Գիրքը ձօնուած

ԳԵՌԳ ՆԱԹԱԼԻ (ԵԱԶՃԵԱՆ)

Ե հանգուցեալ հեղինակի Նայիրի կնոջը եւ Յակոբ ու Բիրակ որդիներուն:

- «Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա. կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ - Տարեգրութիւն եւ կենսամատենագիտութիւն», Ա. հատոր՝ (1947-1995), կազմողներ՝ Գոհար Մարգարեան եւ Անուշ Մակարեան (Երեւան), Սօսի Սազայեան (Լիբանան), պատասխանատու խմբագիր՝ Շահան արք. Մարգիսեան, մատենագիտական խմբագիր՝ Մայա Գրիգորեան, «Չան-Գալ» հրատարակչութիւն (Երեւան), Անթիլիաս, 2025 [փաստական՝ 2026], շուրջ 630 մեծադիր էջ (համառոտագրութիւններու եւ յապաւումներու, անձնանուններու, տեղանուններու, եկեղեցիների, օգտագործուած գրականութեան եւ ուրիշ բազմաթիւ ցանկեր): Մեկենաս՝ տիկին Սրբուհի Սըըրլեան՝ ի յիշատակ իր ծնողաց՝ Նահապետի եւ Կիլիկացի: Գիրքը ձօնուած է Արամ Ա.-ի հայրապետական գահ բարձրանալու 30-ամեակին:

- «Շահէ Տէր Գեորգեան - Նամակահի եւ այլ նիւթեր», կազմող՝ Կարինէ Զիրքճեան-Տէր Գեորգեան, խմբագիր եւ ծանօթագրութեանց հեղինակ՝ Գեորգ Եազըճեան, վերստուգող սրբագրիչ՝ Հրաչ Մեփեթեան, «Էտիթ փրինթ» հրատարակչութիւն, Երեւան, 2026, 376 էջ (16,5 x 23,5 սմ.) (Երեւանի Փոլիթեքնիք հիմնարկէն շրջանաւարտ հալեպահայ վաղամեռիկ ճարտարապետ Շահէ Տէր Գեորգեանի, նաեւ կնոջ՝ Կարինէի՝ ամուսինին ամուսնացած նամակահի, Շահէի ու անոր մասին տարբեր գրութիւններ, յուշարձաններու յատակագիծեր, գունաւոր եւ սեւ-ճերմակ հարիւրաւոր լուսանկարներ, 625 ծանօթագրութիւն, անձնանուններու ցանկ):

- Շառլոյեան Լեւոն, «Հայ գիրի եւ մշակոյթի տարօնցի սպասաւորներ», Ա. հատոր, Հայլեպ, 2025 [փաստական՝ 2026], 320 էջ (17 x 24 սմ.) (Տարօնի ծնունդ վաստակաւոր դէմքերու ներկայացում, բազմաթիւ պատկերներ): Հատորը լոյս տեսած է Տարօն-Տուրուբերանի հայրենակցական միութեան Հայլեպի վարչութեան հովանաւորութեամբ:

- Ուզունեան Հայկաշէն (Ouzounian Haygashen), «Յուշամատեն Մեղրեան կրթական հաստատութեան» (The Annals of the Melkonian Educational Institute), Ա.Մ.Ն., 2026 (առաջին անգամ Երեւանի մէջ 2004-ին հայերէնով լոյս տեսած գիրքին թարգմանութիւնը) (անգլերէն):

- Մարգարեան Արմէն Եւրիկի, «Հարաբառի բարբառի բառարան», Գ. հրատարակչութիւն, Երեւան, 2026 (վերահրատարակութիւն 2013-ին առաջին անգամ լոյս տեսած ու սպառած, 2019-ին վերահրատարակուած, սակայն տպաքանակը Ստեփանակերտի մէջ ատրպէյճանցիներու գերութեան մէջ մնացած արժեքաւոր հատորին):

- Մարգարեան Արմէն Շաւարշի, «Շամուտ», խմբագիր՝ Անահիտ Կարապետի Խանունեան-Մարգարեան, հեղինակային հրատարակչութիւն, «Ատոկիկ» հրատարակչութեան տպարան, Երեւան, 2025 [փաստական՝ Ապրիլ 2026], 504 էջ (17,5 x 24,2 սմ.) (հեղինակի ծննդավայրի՝ Լոռիի մարզի Շամուտ գիւղի հիմնադրման պատմութիւնը, հիմնադիր տոհմերը, բնակիչներուն տոհմագրութիւնը, ամբողջական ազգագրութիւնն ու բանահիւտութիւնը, բազմաթիւ տոհմածառեր, գունաւոր եւ սեւ-ճերմակ լուսանկարներ): Հեղինակը հատորը նուիրած է «ապրած-գնացած, բայց իրենց բարի գործերով սերունդների յիշողութեան մէջ յաւերժացած շամուտցիներին»:

ԾԱՂԻԿՈՎ ԱՂՋՆԱԿ ՄԸ

Այդպիսով ծաղիկն այլ նոր նշանակութիւն մը կը ստանայ: Ան կը թօփ ըլլալու գէնքերուն դեմ ուղղուած լուռ, բայց վճռական հակադրութիւն մը: Ծաղիկը չի կրնար ունէ մէկը պարտութեան մատնել. ան միայն կրնայ աճիլ ու ծաղկիլ՝ ցուցադրելով կեանքը եւ անոր բովանդակ գեղեցկութիւնը: Եւ ճիշդ ա՛յդ է անոր ուժը: Ան մեզի կը յիշեցնէ, որ խաղաղութիւնը միայն զօրութեամբ չի հաստատուիր, այլ կեանքը պահպանելու, խնամելու եւ փայտախելու կարողութեամբ:

Տիկնիկն այլ նոյնքան խորհրդանշական է: Չափափաս մարդոց համար ան լոկ խաղալիք մըն է: Բայց երեխային համար ան բարեկամ մըն է, ընտանիքի անդամ մը, հարազատ խաղընկեր մը, կամ միտքաբարութեան աղբիւր մը: Պատերազմի գոտիներու մէջ տիկնիկներն ու փափուկ խաղալիքները յաճախ այն սակաւաթիւ իրերն են, որ երեխաները իրենց հետ կը վերցնեն փախուստի ճամբուն: Անոնք կը հանդիսանան մարդկայնութեան այն խորհրդանշանները, որոնք պետք է պահպանուին, նոյնիսկ ամենադժուան իրավիճակներու մէջ:

«Ծաղիկով աղջնակ մը» ստեղծագործութիւնը իր խորհրդաւոր պարզութեան մէջ մեզի կը յիշեցնէ, որ խաղաղութիւնը միայն պետութիւններու կամ կառավարութիւններու գործը չէ: Ան կը սկսի առօրեայէն՝ այնտեղ, ուր բոլորս պատասխանատուութիւն կը ստանձնենք իրարու հանդէպ, որպէսզի երեխաները անվախ խաղալ կարենան ու աճիլ կեանքի մէջ, սորվիլ, ձեռք բերել իրենց փորձառութիւնները եւ, ի վերջոյ, իրենք ալ ատակ դառնան իմաստ տալու իրենց գոյութեան եւ ապրելու գայն գիտակից պատասխանատուութեամբ:

Արդարեւ, քանի դեռ երեխան կրնայ մէկ ձեռքով բարձրացնել ծաղիկ մը, իսկ միւսով գրկել տիկնիկ մը, մեռած չէ տակաւին յոյսը, կեանքը, որ կը ծաղկի, սերը կ'աճի կեանքը իմաստաւորող իր բովանդակ գեղեցկութեամբ: Բայց երբ երեխան կը ստիպուի գէնք կրել կամ մահ ու ւեր սփռող որոտացող թնդանոթներէն փախչիլ՝ ձախողած է աշխարհը իր ամենահիմնական պարտականութեան մէջ:

Այս իմաստով՝ «Ծաղիկով աղջնակ մը» արձանը կարելի է ընկալել որպէս խաղաղութեան պատգամ մը: Ան չի ցուցադրեր պատերազմին սարսափները, այլ կը յիշեցնէ այն, ինչ պատերազմը մարդէն ամենէն առաջ կը խլէ՝ երջանիկ մանկութիւն մը ապրելու իրաւունքը, վստահելու կարողութիւնը եւ ապահով աշխարհի մը երազը: Ան չի հնչեցնէր քաղաքական կոչ մը եւ ոչ ոք կը մեղադրէ. իր լուռ եւ խոնարհ ներկայութեամբ ան միայն կը յիշեցնէ, թէ ինչ է այն մեծագոյն արժեքը, որ պարտաւոր էք պաշտպանել՝ Վստան բանէ առաջ կեանքը: Պետք չէ մոռնալ, որ դիմացինը միշտ մա՛րդ է, կեանք է ու կը ներկայացնէ անչափելի արժեք մը: Ամեն մարդկային կեանք ինքնին տիեզերք մըն է: Անոր կորուստը երբեք միայն մէկ մարդու կամ անհատի մը կորուստը չէ, այլ ամբողջ աշխարհի մը աղքատացնելու

Շարունակած էջ 3-էն

ողբերգութիւն: Ուստի ամենեւին զարմանալի չէ, որ այսպիսի համեստ թուող ստեղծագործութիւններ երբեմն մարդոց սիրտերուն շատ ատելի խոր ու ազդեցիկ կը խօսին, քան ամենաշքեղ պատերազմական յուշարձանները:

Արդարեւ, երբ աշխարհը կը մոռնայ մանուկը, կը մոռնայ նաեւ ինքզինքը: Մանուկը պաշտպանել՝ մարդկութիւնն ու անոր ապագան ապահովել կը նշանակէ: Խաղաղութիւնը պատերազմին լոկ բացակայութիւնը չէ: Ան այն չէ, որ պատերազմէն ետք կը մնայ, այլ այն՝ որ մարդուն մէջ մարդկայնութենէն կը մնայ. այն խորհրդաւոր եւ ստեղծագործ գոյութիւնը, որ մարդը ատելի՝ մարդ կը դարձնէ: Խաղաղութիւնը կը սկսի այն պահուն, երբ մարդը դիմացինին մէջ ոչ թէ թշնամի, այլ ամբողջ տիեզերք մը կը տեսնէ՝ իր բովանդակ գեղեցկութեամբ, հմայող խորհրդաւորութեամբ եւ անչափելի արժանապատուութեամբ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԻԹ

BIJOUTERIE GARO հաստատութիւնը կարիքը ունի՝

- Վարպետ ոսկերիչ ձեռնային աշխատանքի «սատեքեր»
- Փայլեցնող (ճիւղաճի)
- Matrix

Պւրճ Համուտի հրապարակ, AUDI դրամատան շէնք, առաջին յարկ:
Մեփակատեղ՝ Կարօ Գրիգորեան
Հեռահայլ՝ 03 207 772 - 01 266514

www.araraddaily.com

ARARAD DAILY NEWSPAPER

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: aradoratorty@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمينية
تصدر عن شركة ماسيسر للملحة والنشر (ش.م.م.)

ԽՆՈՐՀԱԻՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Մ.-ի սկստական կազմի նախկին անդամներէն ընկեր ժան-ժազ Միհասեանի ընդ օրոյ. Ծոյն Մումճեանի նշանախօսութեան ուրախ առիթով. Հ.Մ.Մ. Պէյրուփի Սկստական խորհուրդն ու խմբապետական կազմը ջերմապէս կը շնորհաւորեն խօսեցեալ զոյգը եւ անոնց ընտանեկան պարագաները:

ՇՆՈՐՀԱԻՐՈՒԹԻՒՆ



Շաբաթ, 4 Յուլիս 2026-ին, Պէյրուփի Ս. Նշան Մայր եկեղեցոյ մէջ, պակի սուրբ խորհուրդով իրենց կեանքը միացուցին Պերճ Իւրնշէյեանն ու Նարէ Բարսեղեանը:

Այս ուրախ եւ օրհնաբեր առիթով, Հայ Աւետարանական Գոլթէհի ուսուցչուհիներէն տիկ. Չարմինէ Կանաչեան Ասմիլեան իր սրտագին շնորհաւորութիւններն ու բարեմաղթանքները կը յղէ նորապսակ զոյգին՝ մաղթելով անոնց սիրով, համերաշխութեամբ եւ Աստուծոյ օրհնութեամբ լեցուն ընտանեկան եղջերակ կեանք:

Ան նաեւ իր ջերմագին շնորհաւորութիւնները կը փոխանցէ Հայ Աւետարանական Գոլթէհի տնօրէն՝ տեր եւ տիկին պրն. Արմէն Իւրնշէյեանին, ինչպէս նաեւ երկու ընտանիքներու բոլոր հարազատներուն, մաղթելով որ այս ուրախութիւնը երկար տարիներ շարունակուի խաղաղութեամբ, առողջութեամբ եւ ընտանեկան բազում օրհնութիւններով: